

ՆԱԽԱԳԻԾ

Խ-128-02.05.2019-ՊԻ-011/0

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 01-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգրք») 379-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2

Օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝

«Վերաքննիչ դատարանը բողոք ներկայացրած անձի միջնորդության հիման վրա բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով համարում է հարգելի, եթե բողոք ներկայացրած անձը հիմնավորում է, որ դատական ակտը ստանալու պահից չեն լրացել բողոքարկման ժամկետները:»:

Հոդված 13.

1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 01-ի քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Վերաքննիչ դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը, եթե այն չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասի 1-ինից 4-րդ և 6-րդից 8-րդ կետերով սահմանված պահանջներին:»:

~~«2. Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին՝ վերաքննիչ դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը:»:~~

2. Նույն հոդվածը լրացնել 2¹-ին, 2²-րդ և 2³-րդ մասերով.

«2¹. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության, եթե՝

- 1) վերաքննիչ բողոքը բերվել է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-րդ կետերով սահմանված պահանջների խախտմամբ.
- 2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.
- 3) վերաքննիչ բողոքը ներկայացրել է այն անձը, որը վերաքննիչ բողոք ներկայացնելու հրավույնը չունի.
- 4) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով.
- 5) վերաքննիչ բողոք ներկայացրած անձը մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին.
- 6) բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել.
- 7) բողոքը բերվել է սույն օրենսգրքի 375⁴-րդ հոդվածի պահանջի խախտմամբ.
- 8) չեն վերացվել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները, կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր թերություններ:

2². Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու կամ վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վերաքննիչ դատարանում ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում՝ նշելով առկա թերությունները:

4)2³. Վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված թերությունները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Ձևական թերությունները չշտկելու կամ նոր թերություններ թույլ տալու դեպքում վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության:»:~~Նույն հոդվածը լրացնել նոր 2¹-ին մասով:~~

~~2)«2¹. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության, եթե՝~~

~~3)վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է:~~

- 4) վերաքննիչ բողոքը ներկայացրել է անձ, որը վերաքննիչ բողոք ներկայացնելու հրավուենք չունեի:
 - 5) բողոքարկվել է դատական ակտ, որը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:
 - 6) վերաքննիչ բողոք ներկայացրած անձը մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին:
 - 7) բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:
- 1) բողոքը բերվել է սույն օրենսգրքի 375⁴-րդ հոդվածի պահանջի խախտմամբ:»:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: